Ճապոնիայի կառավարության դրամական աջակցությամբ Հայաստանում տարեկան 2000 օրթեզ է պատրաստվում

11:03, 15 Մարտ, 2018

ԵՐԵՎԱՆ, 15 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված մոտ 120 հազար եվրո դրամաշնորհի միջոցով Հայաստանի Հանրապետությունում պատրաստվում է տարեկան մոտ 2000 օրթեզ:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Օրթեզ» կենտրոնի և Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան միջև դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է 4 տարի առաջ:

Կենտրոնի տնօրեն Արա Թեքյոզյանի խոսքով՝ ստորագրված պայմանագրի շնորհիվ իրենք մեծ տեխնիկական օգնություն են ստացել:

«Մենք ստացել ենք հատուկ գործիքներ, որոնց միջոցով պատրաստվում են օրթեզները: Այդ մասնագիտական գործիքները շատ թանկ են՝ մոտ 120 հազար եվրո արժողությամբ նյութական օգնություն էր: Այդ սարքավորման միջոցով տարեկան պատրաստում ենք մոտ 2000 օրթեզ»,- նշեց Թեքյոզյանը:

Նա ընդգծեց, որ այս 4 տարում բազմաթիվ հենաշարժողական խնդիր ունեցող երեխաների համար օրթեզավորման կենտրոնում մեծ քանակությամբ օրթեզ է պատրաստվել:

Օրթեզներն օգնում են շտկել հիվանդի վերջույթների կամ մարմնի այլ մասերի դեֆորմացիան՝ տեղաշարժվելու կամ որոշակի աշխատանք անելու համար:

Կարծիքներ

10:05, 22.03.2018
Շնորհավորելով Պուտինին՝ Թրամփը ցույց տվեց, որ ընդունում է Ղրիմում նրա լեգիտիմ նախագահ լինելը. Ալեն Ղեւոնդյան

15:08, 17.03.2018
Ադրբեջանի քայլերը նախընտրական շոուներ են. Թեւան Պողոսյան

Բաժնի բոլոր նյութերը

Հարցազրույցներ

10:25, 15.03.2018
Վերականգնվող էներգետիկան արտադրության մեջ հնարավոր է հասցնել 60 տոկոսի. Հայաստանը բռնել է ինքնաբավության ուղին

10:09, 14.03.2018
Արմավիրի դատախազության առաջնային խնդիրներից է լինելու կոռուպցիայի դեմ պայքարը. Վահե Հովհաննիսյանի հարցազրույցը

Բաժնի բոլոր նյութերը

Փաստ մեկնաբանությամբ

14:03, 12.02.2018
Թուրքիան կոպտորեն խախտեց հայ համայնքի ներքին ինքնավարությունը՝ միջամտելով կրոնական գործերին. Ռուբեն Մելքոնյան

21:08, 08.02.2018
Հավը երազում կորեկ է տեսնում. Ադրբեջանի նախագահի հայտարարությունները դառնում են ծաղրի առարկա